



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL ORGANIZATION

**Մասնագիտական պարտականությունների իրականացման
գործընթացում դրսևորվող հիմնական թերացումները և դրանց համար
կիրառվող կարգապահական պատասխանատվության միջոցները**

Գրավոր հարցումների տվյալների ամփոփում

Երևան, 2015



Դատական համակարգ

ՀՀ դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվություն

Այսպես, Դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի համաձայն՝ դատավորի կարգապահական պատասխանատվության համար հիմք է.

- արդարադատություն իրականացնելիս նյութական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, որը կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ.
- արդարադատություն իրականացնելիս դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, որը կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ.
- դատավորի կողմից վարքագծի կանոնների կոպիտ կամ պարբերաբար խախտումը.
- ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը
- իր պարտականությունների հետ չկապված պաշտոն զբաղեցնելը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, առևտրային կազմակերպություններում,
- բացի գիտական, մանակավարժական և ստեղծագործական աշխատանքից այլ աշխատանք կատարելը,
- արդարադատության խորհրդի նիստերին չմասնակցելը,
- իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի համար գրավոր բացատրություններ չներկայացնելը,
- իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում արդարադատության խորհրդում բացատրություններ չներկայացնելը,
- բժշկական գնություն չանցնելը,
- պարտադիր վերապատրաստում չանցնելը,
- փորձաշրջանի ղեկավարի համար իր սահմանված պարտականությունները չկատարելը,
- էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին արդարադատության և օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացման կապակցությամբ իր գործունեությանը միջամտելու կամ օրենքով չնախատեսված այլ ներգործության մասին չհայտնելը:

Դատավորներին կարգապահական պատասխանատվության է ենթարկում արդարադատության խորհրուրդը:

Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասությամբ օժտված են.

1. արդարադատության նախարարը.
2. Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը:
3. վճռաբեկ դատարանի նախագահը:



Ընդ որում, Վճռաբեկ դատարանի նախագահն իրավունք ունի միայն վճռաբեկ դատարանի պալատի դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցել:

Կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են.

- Անձի դիմումը,
- պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, պաշտոնատար անձի դիմումը,
- դատական պրակտիկայի ամփոփման կամ ուսումնասիրման արդյունքներով կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքի հայտնաբերումը,
- վարույթ հարուցող անձանց կողմից կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքի ինքնուրույն հայտնաբերումը,
- Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից կայացված դատական ակտը, որով հաստատվել է, որ տվյալ գործը քննելիս Հայաստանի Հանրապետության դատարանը թույլ է տվել Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում:

Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու պահանջ բովանդակող դիմումների քանակը, առիթները, տեսակները ինչպես նաև հարուցված կարգապահական վարույթների քանակը և տեսակները պարզելու համար կազմակերպության կողմից 15.04.2015 թվականին ուղարկվել է գրություն ուղղված ՀՀ արդարադատության խորհրդին:

Արդարադատության խորհրդի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2014 թվականի ընթացքում Արդարադատության խորհրդին է ներկայացվել դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու թվով 314 պահանջ, որոնցից 262-ը անձի դիմումի հիման վրա, 49-ը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդման հիման վրա, 2-ը վարույթ հարուցող անձանց կողմից կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքի ինքնուրույն հայտնաբերման հիման վրա և 1-ը՝ դատական պրակտիկայի ամփոփման կամ ուսումնասիրման արդյունքների հիման վրա:

Վճռաբեկ դատարանի որոշմամբ, որն 21.06.14 թ. դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքով (համարը՝ ՀՕ-86-Ն) ուժը կորցրել է, կարգապահական վարույթ չի հարուցվել: Չկա նաև ՀՀ մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից կայացված դատական ակտի հիմքով հարուցված վարույթ (Տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու պահանջ բովանդակող դիմումների քանակն ըստ առիթների	
Առիթ	Քանակ
Անձի դիմումը	262



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
 ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
 PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL ORGANIZATION

Պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, պաշտոնատար անձի հաղորդումը	49
Դատական պրակտիկայի ամփոփման կամ ուսումնասիրման արդյունքները	1
Վարույթ հարուցող անձանց կողմից կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքի ինքնուրույն հայտնաբերումը	2

2014 թվականի ընթացքում դատավորների նկատմամբ հարուցվել է 9 կարգապահական վարույթ, որից 2-ը՝ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտում թույլ տալու հիմքով, 1-ը՝ վարքագծի կանոնների խախտում թույլ տալու հիմքով, 6-ը՝ նյութական և դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ թույլ տալու հիմքերով: Կարգապահական վարույթներից 3-ը հարուցվել է ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի (սկսած՝ 25.07.2014-ից (ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով) կողմից, իսկ մնացած թվով 6 կարգապահական վարույթները հարուցվել են ՀՀ արդարադատության նախարարի կողմից (Տ՛ես աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Հարուցված վարույթների թիվն ըստ կարգապահական վարույթ հարուցող անձանց	
Կարգապահական վարույթ հարուցող անձ	Քանակ
ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողով, սկսած՝ 25.07.2014թ.-ից ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով	3
ՀՀ արդարադատության նախարար	6

Վերջինս վարույթներից 3-ի դեպքում նախազգուշացում է հայտարարել դատավորներին, մինչդեռ հանձնաժողովը միայն մեկ դեպքում է նախազգուշացում հայտարարել: Կարգապահական վարույթով պայմանավորված նկատողություն, խիստ նկատողություն կամ ՀՀ նախագահին դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդության դեպքեր չեն գրանցվել (Տ՛ես աղյուսակ 3):



Աղյուսակ 3

Կարգապահական վարույթ հարուցող անձ	Նախագգուշացում	Նկատողություն՝ գուգորված 6 ամի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից գրկելով	Խիստ նկատողություն՝ գուգորված 6 ամի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից գրկելով	Դատավորի լիազորություններ ի դադարեցման միջնորդությամբ Հանրապետության Նախագահին դիմելը
ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողով, սկսած 25.07.2014թ.-ից ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով	1	0	0	0
ՀՀ արդարադատության նախարար	3	0	0	0

ՀՀ Ոստիկանություն

ՀՀ Ոստիկանության աշխատակիցների նկատմամբ կարգապահական պատասխանատվության հիմքերը սահմանված են «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով, որի 43-րդ հոդվածի համաձայն՝ դրանք են.

- իր ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը,
- ծառայողական դիրքը չարաշահելը,
- ծառայողական լիազորությունների սահմանն անցնելը,

օրենքով ուղղակի նախատեսված՝ ոստիկանության ծառայողի էթիկայի կանոնները խախտելը:



Ծառայողական քննություն նշանակելու առիթներ են.

- ոստիկանության ծառայողի կողմից իրավախախտում կատարելու մասին Ազգային ժողովի պատգամավորի, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական և իրավաբանական անձանց գրավոր հաղորդումները, դիմումները.
- դատախազի հաղորդումը կամ միջնորդագիրը՝ համապատասխանաբար ոստիկանության ծառայողի թույլ տված կարգապահական խախտման կամ խախտման պատճառների ու դրանց կատարմանը նպաստող պայմանների մասին.
- լրատվության միջոցի հաղորդումը ոստիկանության ծառայողի թույլ տված իրավախախտման մասին.
- ոստիկանության ծառայողի կողմից վարչական իրավախախտում կատարելու փաստով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի համաձայն կազմված արձանագրությունները.
- իրավախախտման անմիջական հայտնաբերումը ոստիկանության ծառայությունների (ստորաբաժանումների) ղեկավարների կամ նրանց լիազորած անձանց կողմից.
- ոստիկանության ծառայողի, ոստիկանության ծառայության (ստորաբաժանման) ղեկավարի զեկուցագիրը ոստիկանությունում հայտնաբերված իրավախախտման մասին՝ հասցեագրված ծառայողական քննություն նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին.
- ոստիկանության ծառայողի զեկուցագիրը:

Ոստիկանության ծառայողի նկատմամբ ծառայողական քննություն և կարգապահական տույժ նշանակելու իրավասություն ունեն ոստիկանության բոլոր ինքնուրույն ստորաբաժանումների ղեկավարները:

2014 թվականի ընթացքում ոստիկանության ծառայողների կողմից թույլ տրված կարգապահական խախտումների փաստերով կատարվել է թվով 1657 ծառայողական քննություն: Քննության արդյունքների հիման վրա 846-ի դեպքում արձանագրվել են կարգապահական խախտումներ և իրավախախտումներ: 846 կարգապահական խախտումներից և իրավախախտումներից ամենատարածվածը 352-ը՝ ծառայողական պարտականությունների ոչ պատշաճ կատարումն է, 85-ը՝ ՀՀ օրենքների, Կառավարության որոշումների, ոստիկանության հրաման-հրահանգների խախտումները, 63-ը՝ ոստիկանության ծառայողին ոչ վայել արարք կատարելը, 61-ը՝ առանց հարգելի պատճառների ծառայության չներկայանալը կամ ծառայությունից բացակայելը, 37-ը՝ ենթակաների նկատմամբ թույլ հսկողությունը, 28-ը՝ էթիկայի կանոնների խախտումը, 25-ը՝ համազգեստի կրման կանոնների խախտումը, 20-ը՝ ոստիկանության ծառայողի պատիվն ու արժանապատվությունն արատավորելու կամ նրա նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելու հիմքով, 19-ը՝ Ճանապարհային ոստիկանության կանոնները խախտելու հիմքով: Արձանագրվել են նաև ծեծի և քաղաքացու նկատմամբ կոպիտ,անհարգալից վերաբերմունքի, վիրավորանքի հիմքերով պայմանավորված 13-ական խախտումներ, հանցագործությունը հաշվառումից թաքցնելու և զենքի կրման,պահմանման և կիրառման կանոնների խախտման հիմքերով պայմանավորված 11-ական



խախտումներ: Կարգապահական խախտման և իրավախախտման տեսակների ամբողջական պատկերին կարող ենք ծանոթանալ ստորև ներկայացված աղյուսակում (Տե՛ս աղյուսակ 6):

Աղյուսակ 6

Կարգապահական խախտման և իրավախախտման տեսակը	Քանակը/ծառայող/
գողություն	5
մարմնական վնասվածք	2
ծեծ	13
սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի հետ	1
կաշառք	6
խարդախություն	1
պաշտոնեական լիազորությունների անցում	2
պաշտոնեական լիազորությունների չարաշահում	9
պաշտոնեական կեղծիք	1
պաշտոնեական անփութություն	1
ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների խախտելը	1
հանցագործությունը հաշվառումից թաքցնելը	11
զենքի կրման, պահմանման և կիրառման կանոնների խախտում	11
ՀՀ օրենքների, Կառավարության որոշումների, ոստիկանության հրաման-հրահանգների խախտումներ	85
ենթականների նկատմամբ թույլ հսկողություն	37
ծառայողական պարտականությունների ոչ պատշաճ կատարում	352
առանց հարգելի պատճառների ծառայության չներկայանալը կամ ծառայությունից բացակայելը	61
առանց ղեկավարության թույլտվության արտերկիր մեկնելը	6
անձնական դրդապատճառներով պաշտոնեական դիրքը օգտագործելը, կամայականության դրսևորելը	2
պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը	2
ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկություններն ապօրինաբար օգտագործելը կամ հրապարակելը	1
ոստ. Օառայողի պատիվն ու արժանապատվությունն արատավորելը կամ նրա նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելը	20
ոստիկանության ծառայողին ոչ վայել արարք կատարելը	63
Էթիկայի կանոններ խախտելը	28
թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործելը	4
ոգելից խմիչք օգտագործած վիճակում ծառայության մեջ գտնվելը	10
ղեկավարի իրավասության սահմաններում տրված հրամանները 2 կամ ավելի անգամ դիտավորությամբ չկատարելը	1



քաղաքացու նկատմամբ կոպիտ, անհարգալից վերաբերմունք վիրավորանք	13
անձին ապօրինի խուզարկելը	1
մերձավոր ազգականների նկատմամբ-իրականացվող քրեական հետապնդման կամ նրանց դատվածության մասին կադրային մարմնին չհայտնելը	1
ծառայողական վկայականը կորցնելը	16
ՃԵԿ-ի կանոնների խախտելը	19
համազգեստի կրման կանոնները խախտելը	25
կարգապահական այլ խախտումներ	35

2014 թվականի ընթացքում կարգապահական տույժի ամենատարածված տեսակը եղել է նկատողությունը (429 ծառայող ենթարկվել է նկատողության), հետո գալիս է խիստ նկատողությունը (285 ծառայող), այնուհետև զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին հայտարարումը (31 ծառայող): Գրանցվել են նաև մեկ աստիճանով կոչման իջեցման 4, մեկ աստիճանով պաշտոնի իջեցման և մինչև 3 ամիս ժամանակով պաշտոնային դրույքաչափի իջեցման 1-ական դեպքեր: 95 դեպքում ոստիկանության ծառայողը ազատվել է զբաղեցրած պաշտոնից (Տե՛ս աղյուսակ 7):

Աղյուսակ 7

ՀՀ	Կարգապահական խախտման և իրավախախտման տեսակը	Քանակը/ծառայող/
1	նկատողություն	429
2	խիստ նկատողություն	285
3	պաշտոնային դրույքաչափի իջեցում մինչև 3 ամիս ժամանակով	1
4	հայտարարում զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին	31
5	պաշտոնի իջեցում 1 աստիճանով	1
6	կոչման իջեցում 1 աստիճանով	4
7	ազատում ոստիկանությունից	95

ՀՀ Դատախազություն

2014 թվականի ընթացքում ՀՀ դատախազության համակարգում կարգապահական պատասխանատվության է ենթարկվել թվով 4 դատախազ, որոնք կապված են եղել «Դատախազի վարքագծի կանոնագրքի» դրույթների խախտման հետ (Տե՛ս աղյուսակ 4):



Աղյուսակ 4

ՀՀ	Կարգապահական խախտման և իրավախախտման տեսակը	Քանակը/ծառայող /
1	«Դատախազի վարքագծի կանոնագրքի» դրույթների խախտում	4

Բոլոր դատախազների նկատմամբ նշանակվել է «նկատողություն» տեսակի կարգապահական տույժը (Տ՛ես աղյուսակ 5):

Աղյուսակ 5

ՀՀ	Կարգապահական խախտման և իրավախախտման տեսակը	Քանակը/ծառայող /
1	նկատողություն	4

Ամփոփելով վերոգրյալը, կարող ենք փաստել որ կարգապահական խախտման և իրավախախտման արձանագրման և դրանից բխող կարգապահական տույժի կիրառման թվով ամենաշատ դեպքերը գրանցվել են ՀՀ ոստկանությունում: Ընդ որում, ի տարբերություն ՀՀ դատախազության և դատական համակարգի, ոստիկանությունում գրանցվել են նաև կարգապահական տույժով պայմանավորված զբաղեցրած պաշտոնից ազատման դեպքեր: Հատկանշական է, որ ՀՀ դատախազությունում արձանագրվել է կարգապահական պատասխանատվության 4 դեպք, որոնցից բոլորն էլ «Դատախազի վարքագծի կանոնագրքի» դրույթների խախտման հիմքով: